

ԿԵԱՆՔԸ ԺԱՌՆԳ. ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

Մարտ 1ին, Երկուշաբթի, Մեծ Պահոց առաջին օրը, պոռոյտ մը կազմակերպուեցաւ դէպի էյն-կէտի եւ Մասաւտա, Վարժարանիոյ Արժանապատիւ Տեսուչը ըրաւ պատմականը Մեռեալ ծովու մօտակայքը զանուազ այս վերջինին:

Մարտ 13ին, Շաբաթ, Երաժշտական երկրոյ մը տեղի ունեցաւ, որու ընթացքին երգուեցան աշուղական երգեր՝ Հոգչ. Տ. Կոմիտաս Արղ. Շէրպէթեանի, Բրչ. Արամ եւ Սարգիս Սարկաւազներու եւ Ժառ. Եաներ Վաչէ Թառաքեանի, Դաւիթ Եալըշեանի եւ Յովհաննէս Պաթմունեանի մասնակցութեամբ: Վճէր, Կեցոյ մողթերգով փակուեցաւ սոյն հաճելի երկերովը:

Ապրիլ 22ին, Հինգշաբթի, Զատիկան տօնիրէն ետք, պոռոյտ մը եւ կազմակերպուեցաւ, դէպի Պարոն-Տէրի պատմական վայրը, ուր սաները վայելցին բնութեան գեղեցկութիւնը, եւ մանաւանդ Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ Գիրչ. Լուսարարապետ Սրբազանի ներկայութիւնը:

Ամեն. Սրբ. Պատրիարք Հօր կարգադրութեամբ, Վարժարանիս Տեսուչ նշանակուեցաւ Հուսարարապետ Գիրչ. Տ. Գրիգորի Արքեպս. Գաղանճեանը, իսկ Փոխ-Տեսուչ՝ Հոգչ. Տ. Վազգէն Արղ. Գարայեանը:

Վարժարանիս սաները, ինչպէս ամէն տարի, այս տարի եւ իրենց լայն մասնակցութիւնը ընդին Աւագ Շաբթուայ հոգեպարտ արարողութիւններուն:

Մայիս ամսու հինգ Շաբաթ երկիրներուն, Վարժարանէն ներս կազմակերպուեցան բանախօսական երկերթիւներ, ըստ հետեւեալին. —

1 Մայիսին, բանախօսին էր Տիւր Ալեքս Գալայճեան, նիւթ ունենալով «Ապրիլիսն Եղեռնը»: Բացման խօսքը ըրաւ Փօխ-Տեսուչ Հոգչ. Տ. Վազգէն Արքեպս: Բարչ. Արամ Սրկ. Ալճանեան մեներգեց «Անձինք Նուիրեալքը»:

8 Մայիսին, բանախօսին էր Բարեչնոր Արամ Սարկաւազ, նիւթ ունենալով «Գրիգոր Շրթայակի Պատրիարքի կեանքն ու գործը»: Բացման խօսքը ըրաւ Տիւր Ալեքս Գալայճեան: Ժառ. սան Վարդան Մելքոնեան մեներգեց «Հանդիսացեալքը» շարականը: Տեսուչ Սրբազանը ըրաւ փակման խօսքը եւ սուաւ իր օրինութիւնը:

15 Մայիսին, բանախօսին էր Բարեչնոր Սարգիս Սարկաւազ, նիւթ ունենալով «Գրիգոր Պարոն-Տէր»: Բացման եւ փակման խօսքը ըրաւ Տիւր Ալեքս Գալայճեան: Ժառ. սան Շնորհ Ետղըրեան արտասանեց Խաչիկ Դաշեանցի «Հայերէն» քերթութեամբ, իսկ Բարչ. Արամ Սրկ. մեներգեց «Գթա, Տէր» համագտան շարականը:

22 Մայիսին, բանախօսին էր Հոգչ. Տ. Վանիկ Արղ. Մանկասարեան, նիւթ ունենալով «Ներսէս Ենորակի»: Բացման խօսքը ըրաւ Տիւր Ալեքս Գալայճեան: Ժառ. սան Վաչէ Թառաքեան մեներգեց «Արիացեալքը» շարականը, իսկ Բարեչնոր Արամ Սարկաւազ՝ «Անկիդըն Հայր» շարականը: Փակման խօսքը ըրաւ Փօխ-Տեսուչ Հոգչ. Տ. Վազգէն Արղ. Գարայեան:

29 Մայիսին, բանախօսին էր Բարչ. Սերոբ Սրկ. Ալճանեան, նիւթ ունենալով «Պետրոս Գուրեան»: Բացման խօսքը ըրաւ Տիւր Ալեքս Գալայճեան: Վաղմուտի բանաստեղծի «Լճակ» քերթութեամբ արտասանեց Ժառ. սան Յովիկ Պաթմունեան, իսկ «Եմ մօրեմ» քերթութեամբ՝ Ժառ. սան Վարդան Մելքոնեան: Փակման խօսքը ըրաւ Փօխ-Տեսուչ Հոգչ. Տ. Վազգէն Արքեպս:

Բուրի Սահակեան Վարժարանի Մանկապարտեղի բաժնի աւարտելէ ետք իր Եարու-նակի եւ ուսուցիչ Մետոսեան Վարժարանի մէջ եւ 1978ին կ'աւարտէ Նախակրթարանի 7րդ դասարանը: Նոյն տարին կու գայ Սուսաղեմ եւ կ'աւարտէ Ժառ. Վարժարանին:

«Սրին», ի դիմաց Ամեն. Ս. Պատրիարք

Հօր եւ Միաբանութեան, զերմօրէն կը ընդհաւուրէ հոգեւոր ասպարէզի առաջին ձեռնադրութիւնը քսացած չորս նորընթացները, մաղթելով որ իրոյն արժեւորեն ու պօշաքերեն ձեռնադրութեամբ ընդունած ընդհանրը, լաւագոյնս պատրաստուելու համար քանակաւորեան ուրբ աստիճանին: